

Ռուսները Հայաստանում

Ռուսները Հայաստանի բնակչության կազմում ազգային փոքրամասնություններից երկրորդն են **եզդիներից** հետո: Համաձայն 2011 թ. մարդահամարի

Հայաստանում **ռուսական սփյուռքի** քանակը կազմում է 14.660 մարդ: Նախկինում ռուս բնակչության քանակությունը ավելի մեծ էր, սակայն Սպիտակի երկրաշարժի, ԽՍՀՄ փլուզման և երկրում կտրուկ տնտեսական անկման պատճառով ռուսների մեծ մասը անկախության առաջին տարիներին արտագաղթեց **Ռուսաստան:**

Ռուսները Հայաստանում ներկայացված են մոլոկաններով և սովետական ժամանակաշրջանում Հայաստան տեղափոխված ժառանգներից:
